

քուի, ինչպէս ընդհանուր եկեղեցին հաւաքուած է Յիսուսի Քրիստոսի շուրջը: Եպիսկոպոսին բացակայութեանը թոյլատրուած չէ մկրտել և ազապ կատարել, այլ ինչ որ նա հաստատէ՝ հաճոյ է Աստուծոյ, ապահով է, վաւեր ամենայն ինչ: Պրիսկոս Սեկունդոս Բիւթանիոյ բղձաշիւր կը գրէր Ամիսոնէ (Սամսոն ք.) Տրայիանոսի 112ին (թղթ. Գիրք Ժ. 96). կը նկարարէր քրիստոնէից կեանքէն, որ առաւօտեան պահուն կը ժողովին, Քրիստոսի ուղղուած երգեր կը նուագեն իբրեւ Աստուծոյ. դարձեալ կը հաւաքուին անմեղ և կատարելապէս անփնտռ սովորական խընշոյք կատարելու համար, և այլն:

Կայ երկրորդ դարէն ֆնացած գեղեցիկ որմնանկար մը Հռոմ գտնուած 1893ին Սրբուհի Պրիսկիլա գետնադարանին մէջ. կը ներկայացնէ անմեղ սիրոյ խնջոյքս: Միևեկիտի փելիքի խօսքերը «Convivia non tantum pudica colemus, sed et sobria, nec enim indulgemus epulis aut convivium mero ducimus» յայտնապէս ցոյց կու տան ազապի նկատմամբ, թէ որչափ այդ խնջոյքը կը կատարուէր համեստութեամբ և չափաւորութեամբ: Ափրիկէի քրիստոնէայք, ինչպէս գիտենք Տերաուղիանոսէ հօգը ջատագովէս, որ ազապի արարողութիւնը կը սկսուէր աղօթքով մը, ժողովականք կը բազմէին պաստառակաց վրայ, համեստ խնջոյք մը կ'ընէին, և կը խօսէին բարեպաշտ նիւթերու վրայ «fabulantur ut qui sciant Deum audire»։ Ձեռաց լուացումն ունէին, կը լուսաւորէին ճրագներով՝ սրահը, կ'երգէին սաղմոս և այլ փառաբանութիւններ Աստուծոյ, վերջին աղօթք մ'ալ կը մատուցանէին և ապա իրարմէ կը բաժնուէին (էջ 803). Հիւպոդիտայ կանոնք, որ ըստ բազմաց կը թուի Հռոմայ մէջ 195 տարւոյն գումարուած ժողովքի մ'արտադրութիւն, մասնաւորապէս գրեթէ ցոյց կու տայ մեզ ազապի արարողութիւնքն և գործադրութիւնքը. մասնաւոր բառերով կը նշանակէ ինչ ինչ դէպքեր: Զոր օրինակ՝ աղքատաց համար

հաղորդութիւն, հաց երկօրեակացաց, տէրունական ազապ, կ'ապապրէ յագնալու չափ ուտել և ոչ ըմպել գինովնալու չափ: Կը հրամայէ՝ եպիսկոպոսին բացակայութեանը՝ քահանային նախագահել ազապին, և ասոր չգտնուելուն՝ սարկաւագին: Երդօնեցաց հացին նկատմամբ այս կարծիքս կայ, որ սովորական հացն է նախապէս պարզ օրհնուած (une eulogie bénié à la messe le matin ou dans les jours précédents), որ մեր ազգային արարողութեան մէջ մասն կը կոչենք և կը բաժնուի հաւատացելոց պատարագին աւարտելէն վերջը:

Ռ. Կ.

(Շարայարելի)

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐՔ

Ս. ՂԱԶԱՐՈՒ

(Շար. տես Բազմավէպ, 1925 էջ 70)

19.

ՊԱԿԱՍՍԱՆԻ ԲԺՇԿԱՐԱՆ

Փորքիի հատոր մ'է սա՝ կազմուած 16 հարիւրորդամեդր մեծութեամբ, 11 հարիւրորդամեդր լայնութեամբ, և հազիւ կէս հարիւրորդամեդր թանձրութեամբ. սա 134 թուահամարն ունի: Կը բաղկանայ 90 էջէ և 45 թերթէ. թուրք բարձր կեայ է: գիրը նոսր:

Ամբողջութիւնը գործերէն առնուած բուրովին պակասաւոր գրուած մ'է, որ սկիզբն ունի յիշատակարանի մաս մը սապէս.

« Թէ դեմ քաղում ժամանակաց արտաւստացն համարի աստուած և քառն ամեւս
« Եւայն մեկաց, զղլամարն և խոստովանու
« Բնամարն: Որ և գմեզ մաքրեցէ քրիստոս
« աստուած յամենայն մեկաց մերոց: Նաև
« զղրմեցի Յակոբ վարդապետն, սր քաղում

« աշխատութիւն կրեաց ի յիկոմն ողբիս,
« մանաւանդ զգճողս սորին զյովսէփ նոստոս
« քահանայս յիշեցիք ի խաչեայ սրտին
« ստոտածոյ և սորբ կոսին մարիամոս, և
« դուք յիշեայ լիշիք ի քրիստոս » : Գրեցաւ
« ի րպիկն ՌձԻԹ, ի յունիս ամսոյ ի ԼԱ » :

Կ'երեւի թէ բժշկարանիս այս կտորը կը գտնուէր կից այն ողբին՝ զոր շարադրած է Յակոբ վարդապետ Ղրիմեցի (Հեղինակ 15րդ դարու), և Յովսէփ անուն քահանայ մ'ալ ընդօրինակեր է գայն (1129 + 551) = 1680 յունիս ՅԻՒՆ, Յաւայի է որ բժշկարանիս մէջ աւելի տեղեկութիւն չի կայ, և մենք կը ստիպուինք զօհանալ միայն այս թուականով, որ ցոյց կու տայ թէ մեր հիները ո՛րչափ յարգ կ'ընծայէին հայ բժշկարաններու :

ԼԵ.

ԲԺՇԿԱՐԱՆ ԱՌ ՀԱՍԱՐԱՅ ԱՄԵՆԱՅՆ
ՃԱՌՈՑ ԵՒ ԱՌՏԻՑ

1303 թուահամարը կը կրէ այս բժշկարանը, որ փոքրիկ հատոր մ'է կաշէկազմ, ոսկեզօծ եզերքներով, բայց սկիզբէն պակասաւոր :

16 հարիւրորդամեղը մեծութիւն, 10 հարիւրորդամեղը լայնութիւն և մէկ հարիւրորդամեղը թանձրութիւն ունի . կը բաղկանայ 121 էջէ և 60 թերթէ . թուղթը հաստ բամբակեայ է, գիրը՝ նոսր՝ գեղեցիկ, բայց չունի ո՛չ թուական, ո՛չ ալ Յիշատակարան :

Լեզուն ասմկօրէն է . կը խօսի Հագի, Ակուայի ցառի, փորցառի, ձեռք դողայոյ, բերնի հոտի, կշտացառի, փայծաղի հիւանդութիւններուն, խիարոպի հաներայ, ձառացառի, մոտացկոտորան, անդտակի հոտիկն, զոգ աղցելի, մրջմնցի և ուրիշ բոլոր զործարաններու ցաւերուն վրայ ու կը յանձնարարէ զանազան դեղեր, որոնք ևս նման են Մխիթար Հերացիի, Ամիրտովաթի և Ասաբի պատուիրածներուն :

Հիւանդութիւններու ու անոնց դեղերուն

վրայ խօսելէ յետոյ՝ կը գրէ նաեւ զոյնբու և անոնց բաղադրութիւններու մասին քանի մը էջ ու կը վերջանայ : Կ'երեւի թէ ըստ ինքեան՝ արդէն համառօտ գրեալ մ'էր . վերջը ունի պարունակած բառերուն մէկ կարճ ցուցակը :

ԼԸ.

ԱՊՐԻԼ ԱՊԱՏԻՆ

Այս ձեռագիրն ալ կարեւոր բան մը չէ . թուական չունի և վերջի ժամանակներու ընդօրինակութիւն կ'երեւի, թէեւ պարունակութեամբը հին, որովհետեւ Ամիրտովաթի Ախրապատիւնէ վերցուած է կամ անկէ քաղուած անկասկած :

Պակասաւոր է և այս բժշկարանը, ուրովհետեւ առաջին էջին վրայ կը կարդանք՝

ՀԱՏՈՐ ԵՒ ԳԻՐԲ ՀՆԻԳԵՐՈՐԴ

վերնագիրը, որով կրնանք ենթադրել, թէ ունէր ուրիշ չորս հատորներ . մանաւանդ որ հոն կը կարդանք նաեւ հետեւել տողերը .

« Որ անուանի՝ Ագրապատին, որ է գիրք
« բաղադրեալ զեղօրէից, և է որպիս զգանձ
« և օգնի լարս գրուցն աւարանոյց, որք մեկ
« եին վասն տեսական և զործնական մասին
« ստանալոյ զկորոսանայ ասողութիւնն » :

Հեղինակը կամ Գրիչը, ո՛վ սր է, այս հատորը կը բաժնէ երեք մասի . առաջինին մէջ կը խօսի զեղերոս փետրիկ վրայ, երկրորդը՝ կը նուիրէ զեղերոս պատրաստութեան կերպին, իսկ երրորդին մէջ կը ներկայացնէ զեղերոս բաղադրութեան կերպը և այս մասն է ահա բուն Ագրապատին կուչեալը, մասինքն զեղարանութիւնը :

*

Յաւալի է որ նախորդ չորս հատորները չի կան, որպէս զի կարելի ըլլար ամբողջին վրայ գաղափար ունենալ և թերեւ իմասալ այնու հեղինակին կամ ընդօրինակչին ո՛վ և ո՛ր ըլլալը :

Ձեռագրատան 428 թուահամարը կը կրէ այս հատորը, որ կազմուած ու լաւ պահուած է:

Մեծութիւնն է՝ 21,5 հարիւրորդամեղը, լայնութիւնը 16 հարիւրորդամեղը և թանձրութիւնը 1,5 հարիւրորդամեղը: Թուղթը բամբակեայ է, գիրը վատ՝ բայց ընթերցելի և նոսր: Ունի 150 էջ գրութիւն 75 թերթի մէջ:

Ունի փայտեայ ներկու կողք պահպանակ, որոնք վերջէն դրուած կ'երեկն, այս պահպանակներուն վրայ տպուած են ծաղկանկարներ, երկրաչափական գործիքներ և մէջ տեղերը Աւստրիական արքունի զինաւորանքները, Առաջին կողքին վերև կը կարդացուի նաեւ գերմաներէն չորս տող գրութիւն մը, ուրկէ կ'իմացուի թէ յուշատեարի մը վերաբերած են անոնք:

ԼԹ.

Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Յ Ք

9 թուահամարը կը կրէ այս անթուական բժշկարանը, որ ժողովածոյ մ'է այլ և այլ ղեղերէ. կաշեկազմ է հաստ կողքերով. ունի 15 հարիւրորդամեղը մեծութիւն, 10 հարիւրորդամեղը լայնութիւն, և 3,5 հարիւրորդամեղը թանձրութիւն: Կը բաղկանայ 224 թերթէ 441 էջ գրութեամբ, որ նոսր է բամբակեայ հաստ թուղթի վրայ:

Տեղ տեղ կը յիշուի Մխիթար բժիշկին ղեղերը, բայց այնչափ պակասներ կան մէջը՝ որ կարելի չէ ստուգել թէ ո՞ր Մխիթարի ղեղերն են, թէ և գիտենք որ մէկ Մխիթար բժիշկ մ'ունեցած ենք, այսինքն ՀԵՐԱՅԻՆ:

Ո՛ր և է Յիշատակարան չունի ձեռագիրս, միայն 281րդ էջին վրայ գրուած է՝ «ԹՎԻՆ Հայոց Ռ-ՁԲ ամիսի մարտ», և հետն ալ կարգ մը օտար բառեր, որոնք աւելի Նուսխայի մը զաղափարը կու տան:

Ձեմ կարծեք սակայն, թէ սոյն Ռ-ՁԲ (1082 + 551 = 1633) թուականը զբաղաւորին հիշող ընդօրինակութեան համար

ըլլայ. օտար զրիչի մը արձանագրածը կը համարիմ ես զայն, զի գիրը բոլորովին տարբեր է բժշկարանինէն:

Եւ թերեւս բժշկարանս այդ թուականէն առաջ էր գրուած:

Նիւթը բոլորովին նման է Մխիթար Հեռագրի և Ամիրտովմարի բժշկարաններուն, և տարբեր բան մը բնաւ չի ներկայացներ: Եւ կը սկսի բժշկական բառերու ցուցակով մը:

Խ.

ԳԻՐՔ ԱՐՎԵՍՏԻ ՔԻՄԻԱԿԱՆ

Այս քիմիարանութիւնը որ 407 թուահամարը կը կրէ, ընդօրինակութիւն է այն ձեռագրէն՝ որ կը գտնուի Պարիզու Библиоте́que nationale ի Հայերէն ձեռագիրներուն մէջ, և որուն համար Ս. Ղազարի ցուցակը կ'աւանդէ՝ թէ « է գործ տեւ « աւուս մատենագրի ոտոյք, յօրինելոյ « բարգմանաբար յարաբացի լեզուէ, և ի « հայ բանասիրաց հասարակոյ, բոյի կացելոյ « ի ԺՁ Դարուն »:

Ընդօրինակուած է 1877ին, թերեւ Հ. Սրապիոն Պարոնեանի ձեռքով:

30 հարիւրորդամեղը մեծութիւն ունի հատորս, 21 հարիւրորդամեղը լայնութիւն, և 2 հարիւրորդամեղը թանձրութիւն: Լաւ կազմուած է, ունի 208 էջ գրութիւն շեղագիր, և 104 թերթ, թուղթը՝ սովորական, նոր, բամբակեայ:

*

Քիմիական աղուեստ ըսելով, պէտք չէ սակայն շփոթել զայն արդի քիմիաբանութեան հետ, որ շնորհիւ Լավուազիէի մեծ գիտներուն, բժշկական գիտութիւնը բոլորովին յեղաշրջեց ու բարեփոխեց:

Հին Ալեքիմիաի մասին խօսող գիրք մ'է այս: որ աւելի հանքային նիւթերու յատկութիւնները և պէսպիսութիւնները ցոյց կու տայ, այն ալ շատ նախնական վարդապետութեամբ:

Գործը թերի է, զի Պարիսի օրինակն

ալ ամբողջ չէ, ինչպէս ընդօրինակիչը վերջին էջին վրայ կը յայտնէ գրելով՝

«ՕՐԻՆԱԿՆ ԹԵՐԻ ՄՆԱՑ»

ԽԱ.

ՔԱՂՈՒԱՅ ՔԻՄԻԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

Երեք թերթէ բաղկացած փոքրիկ տեւորակ մ'է սա, որ «Խմբագիրք» անունը կրող 1527 թուահամար տուփին պարուսնակած ձեռագիր տետրակներուն Ցրդն է.

Նորագոյն գրչի մը գործն է սա և աւելի՝ քաղուած մը քան թէ հեղինակութիւն:

47 պարբերութենէ բաղկացած կարճ խօսքեր են, անյարմար քիմիագործութիւն կոչուելու, որովհետեւ բոլորն ալ գունաւ շինութեան վրայ կը ճառեն, և տեղ տեղ ալ անուշեղէններու արուեստը կ'աւուսցան:

Տետրին ամենէն վերջը նշանակուած է՝ «27 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1876», որ անշուշտ ընդօրինակութեան թուականն է:

Վերջին էջին վրայ կան անուններ կարգ մը բոյսերու, որոնց մէջ հետաքրքրական է սա պարբերութիւնը.

«Զորորդ խոտն չեմսին, որ եւ արեգաւ... կ'անն... և այս խոտս (տն. Գանդա օր, և հայն արեւմտախոտ և ոսկեխոտ), ի Մըս... և յայ երկիրն կոչ յոտանի, և ասպն սորս... և ըիսմիմ Պէյարի ասե և կոչ յոտանի սա... և ի ՄԱՍԻՍԻ ՏԱԿՆ վերձ ի գիւղն Արկուսի... և ի Կեղոսայ յերիւքն, որ յարեմտից կողմն... և սահմանակից և Բայրոսայ», և այլն:

Յայտնի չէ թէ ո՞վ է գրողը. կ'երևի բանահաւաք մը յղած է զայն Ս. Ղազար, Թերեւս Հ. Ղ. Աւիշանին իբր տեղեկութիւն:

ԽԲ.

ԱՆՆՇԱՆԱԿ ԶԵՆԱԳԻՐ

Ամենավատ գրով գրուած ձեռագիր մ'է սա, անանուն և անիշատակարան հաստորմը, որ կը կրէ 1450 թուահամարը:

Արժէք մը բնաւ չի ներկայացներ, կը խօսի մանուններու վրայ, բայց Հաստորին կէսէն անդին մաքուր գրով կը կարդացուի ճշախնոս Հաքիմի բժշկարանն մաս մը, որ՝ ինչպէս գիտենք՝ Հայ տպագրութեան նախախայրիք գործերէն է և հրատարակուած է վենետիկի մէջ 1513ին, Ձեռագիրս կը պարունակէ նաեւ Ամիրտովմթէ վերցուած քանի մը էջ:

Ընդ ամէնը 120 թերթէ կը բաղկանայ 240 էջ գրութեամբ, բամբակեայ պարզ թուղթի վրայ:

Կ'երևի թէ բաւական գործածական եղած է հաստոր, որովհետեւ թուղթերը շատ տեղ մաշած են և մեծապէս աղտոտած:

Առաջին էջին վրայ կը կարդացուի «Պետրոս Վարդապետ» և երրորդ էջին վրան ալ «Կարապետ Վարդապետ» և նունները, առանց թուականի:

ՏՕՔԹ. ՎԱՐՈՒՄ Ց. ԹՈՐԳՈՍԵԱՆ

ՎԵՆԵՏԻԿ — Ս. Ղազար

1 փետրուար 1923

(Շարունակելի)

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅԵՐԷՆԻ ՆՈՐ ԲԱՌՆԵՐ

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԹՂԹԵՐՈՒՆ ՄԷՋ

(տպ. Աղեքսանդրապոլ 1910)

(Շար. տես Բագմ. 1924, էջ 72)

69. Ուրբիթ. մէկ անգամ ունի Մագ. էջ 62. Իբրու մենքանայել մրցեալ մակաասար զագաթանն ոստուցեալ և յոնկացն մանրամասնից իբրու զավրիթեացն ճահնցուցանէ հանդէպ ճակատուն: Կոստանեան նախ դրած է այս ձեռով, էջ 259 ձեռագրական տարբերութեանց մէջ դրած է ուրբիթեացն, իսկ էջ 350 սրբագրած է զոմբիթեացն, որով բառը դարձած է յատուկ անուն: Ըստ իս ուղղա-